ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Քաղսիի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

28.10.2011թ. գ.Քաղսի

2011թվականի հոկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքում տեղի ունեցավ համայնքի 2011թվականի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ. Հայկ Վարդանյան, Գևորգ Խուրշուդյան, Սամվել Դավթյան,Գագիկ Խուրշուդյան, Վաղինակ Գրիգորյան, Էդիկ Ենոքյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից. Հասմիկ Դավթյան, Վիոլետտա Ենոքյան, Դուխիկ Թադևոսյան, Ռուզաննա Խաչատրյան, Լուսինե Մկրտչյան, Սամվել Գրիգորյան

Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

2.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

Զեկուցող- Քաղսի համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան

-Համայնքի ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն

-Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հարցերի մասին տեղեկատվություն

2011թվականի ընթացքում հիմնովին վերանորոգվել է Քաղսիի մանկապարտեզը, դարձել է բարեկարգ ու գեղեցիկ, համայնքի երեխաների համար նախակրթության իսկական օջախ: Մանկապարտեզը համայնքի միջոցներով կահավորվել և անհրաժեշտ գույքով համալրվել է, անցկացվել է ջեռուցման համակարգ, ապահովվել է ջրամատակարարմամբ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ 2011թվականի ընթացքում կատարվել է խմելու ջրի ներքին ցանցի մասնակի նորոգումներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝

Համայնքի բնակիչ՝ Վաչագան Մելքոնյանը առաջարկեց Ն.Քաղսիում գտնվող խանութը օգտագործել համայնքի բնակիչների կարիքների համար. այն վերանորոգել հանդիսավոր կամ թաղման արարողությունների համար

Համայնքի մի քանի բնակիչներ հավանություն տվեցին այս առաջարկին:

ՀԱՐՑԵՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Բնակիչների կողմից եղան հարցադրումներ սոցիալ- տնտեսական զարգացման հետ կապված հարցերի մասին, հողատարածքների վերաբերյալ առկա խնդիրների շուրջ, համայնքի ղեկավարի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունել Քաղսի համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան